

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՆԻՍՏԸ ՍՈՖԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 23—27 օրերին Սոֆիայում, «Ունիվերսիադա» սրահում, գումարվում է Ժողովուրդների խաղաղության համար համաշխարհային պառլամենտի նիստը, որին մասնակցել են կրոնական, քաղաքական, մշակութային, տնտեսական կազմակերպությունների 2260 պատգամավորներ 134 երկրներից և 100 միջազգային կազմակերպություններից:

Սույն ժողովին ներկա են եղել Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի նախագահ Տոդոր Ժիվկովը և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահ Ռոմեշ Չանդրան՝ Հնդկաստանից:

Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ժողովին մասնակցել է նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Ժողովի հիմնական նպատակն է եղել այս օրերին միջազգային կյանքի մեջ ծագած բարդությունների հարթումը:

Ժողովի՝ խաղաղության ի նպաստ կատարվող աշխատանքներին մասնավոր հաջողություն են մաղթել ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմը, ինչպես նաև կրոնական ու պետական բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Ժողովի օրակարգի վրա եղել են խաղաղության պաշտպանության ի նպաստ մի շարք հարցեր, ինչպես նաև «կրոնական հաստատությունների դերն ու պատասխանատվությունները խաղաղության պայքարի մեջ»:

Ժողովի ընթացքում Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը ևս, հանուն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի, հանդես է գալիս հետևյալ ողջույնի խոսքով.

«Կպատկանիմ Եկեղեցի մը, որը թեև փոքր իր հավատացյալներու թվով և սակայն մեկն է հնագույններեն քրիստոնյա Եկեղեցիներու ընտանիքին մեջ և իր դարավոր գոյության ընթացքին եղած է այունը նույնպես փոքր ժողովուրդի մը, որ իր դարավոր փոթորկալից և աղետներով լեցուն իր կյանքի ընթացքին ուրիշ բան բաղձացած չէ, բայց եթե խաղաղություն, աշխատանք և բարգավաճում՝ խաղաղության պայմաններու մեջ:

Այդ պատճառով է, որ Հայ Եկեղեցին իր աղոթքներուն և շարականներուն մեջ միշտ ոգեկոչած է խաղաղությունը:

Անձնապես ես կներկայացնեմ հոգևոր համայնք մը, որ դարեր ի վեր կապրի բուլղար ժողովուրդի հյուրընկալ ծոցին մեջ, ուր ապաստան եկած է գտնել փախչելով հուրեն ու սուրեն, աղետներեն և դժբախտություններեն, ընտրելու համար խաղաղ կյանք մը:

Ատոր համար է, որ խաղաղության կարոտը զոր ունի հայ ժողովուրդը, մեկն է ամենեն անկեղծներեն, որ երբևիցե կրնա բխիլ քրիստոնյա համայնքի մը բերանեն:

Քրիստոնյա Եկեղեցին իր գոյությամբը և առաքելությամբն իսկ մեծագույն ոգեշիրան է եղեծ խաղաղության դատին իր կյանքի բոլոր դարերու ընթացքին:

Քրիստոնյա Եկեղեցին որդեգրելով բոլոր այն պատգամները, որոնք մարգարեներեն կուգային ի պաշտպանություն ժողովուրդ-

ներու խաղաղության, ինքն իսկ առաջին օրեն մղիչ և տարածիչ հանդիսացավ խաղաղության սուրբ դատին և ուրիշ խոսք չգտավ ավետելու համար Մեսիային գալուստը, բայց եթե հոչակելով «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Ավետարանը ուրիշ բան չէ, բայց հորդառատ աղբյուրը այս մեծ սկզբունքի քարոզին: Սկզբունք, որը ոչ միայն պիտի ավետարաներ մեր Փրկիչը, այլև պիտի զայն տարածեին առաքյալները համայն ծագս աշխարհի:

Խաղաղության այս նշանաբանն է, որ պիտի շարունակեր արձագանք գտնել Եկեղեցվո ս. հայրերու պատգամներու մեջ, ինչպես նաև Հայ Եկեղեցվո ս. հայրերու մեզ թողած հոգևոր ժառանգության մեջ:

Քրիստոնյա բոլոր Եկեղեցիները կհավատան, թե անհնար է, որ կարենա զարգանալ մարդկային քաղաքակրթությունը, եթե մարդոց մեջ եղբայրությունը չտիրե, եթե բոլոր ժողովուրդները իրարու վրա չնային իբրև Աստուծո ստեղծած միևնույն զավակներուն և եթե այդ եղբայրությունը չամրապընդվի տևականապես և վերջնականապես: Այդ ամրապնդումը անկարելի է, որ իրականանա, քանի աշխարհի վրա խուփին տեղ կտիրե սուրը և ժողովուրդներու գործակցության նվիրական սկզբունքներուն տեղ կխոսին թնդանոթները, ամլության մատնելով ստեղծագործական ամեն ճիգ և զայն իրականացնելու ամեն թափ:

Իմ համեստ ձայնս միացնելով խաղաղասեր ժողովուրդներու հոգիեն բխող այս ընդհանուր պոռթկումին, ուրիշ եզրակացություն չի մնար քաղել, բայց եթե համաշխարհային գործակցություն մը՝ խաղաղության դատին համար, որովհետև ամեն օր, որ կանցնի ժողովուրդներու ջիղերը պրկած, այնքան կհեռացնե երազված մեծ օրը, երբ մարդիկ պիտի կարենան համախումբ աղաղակել այս անգամ շատ ավելի իրավամբ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Ժողովի ընթացքում բուլղար օրթոդոքս Եկեղեցու Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը, որպես Ժողովուրդների խաղաղության համար համաշխարհային պառլամենտի փոխնախագահ, ի պատիվ ժողովականների, հոգևոր համերգ է կազմակերպել Սոֆիայի Ալեքսանդր Նևսկի Մայր տաճարում և ապա՝ մեծ ընդունելություն «Բուլղարիա» հյուրանոցում:

Սեպտեմբերի 27-ին ժողովը ավարտում է իր աշխատանքները:

Ժողովից հետո, հանուն Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Պետական խորհրդի նախագահ Տոդոր Ժիվկովը Բոյանայի պետական ապարանքում, ի պատիվ ժողովի պատգամավորների, մեծ ընդունելություն է կազմակերպում:

Սեպտեմբերի 28-ին, կիրակի օրը, Ս. Վարագա Խաչի տոնին, Տ. Տիրայր արքեպիսկոպոսը Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում նախագահում է Վեհափառ Հայրապետի գահակալության 25-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական հանդիսությանը և իր ոգեշունչ քարոզի մեջ վեր է հանում Հայոց Հայրապետի գահակալության 25 տարիների եկեղեցաշեն, հայրենանվեր ու խաղաղասիրական գործունեությունը՝ արևոտ օրեր բարեմաղթելով Հայոց Հայրապետին, որ Նա երկար, երկար տարիներ Լուսավորչի Աթոռը Է՛լ ավելի փառավորի նորանոր հաջողություններով և նվաճումներով՝ հանսասանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ի բարօրություն հայրենյաց և ի մխիթարություն հայ ժողովրդի, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի: